

Ալբերտ Ա. Ստեփանյան
պատմ. գիտ. դոկտոր

**ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԵՃ
ՀԱՅՔՈՒՄ***

Մաս առաջին. *Ներհանրության ինտեստալիստի հասարակումը.
Արդաշես I*

1. «Քաղաքակրթություն» հղացքը և դրա հիմնարար չափումները

Հիմնախնդրի լուսարանման նպատակով մեկնարկել ենք «քաղաքակրթություն» հղացքի այն ընդհանրական ըմբռնումից, որը մշակվել է XX դարի հումանիտար մտքի ծիրում: Ընդամիս, առանձնակի սևեռումի խնդիր ենք դարձրել ֆրանսական «Աննալների» պատմագիտական դպրոցի ձեռքբերումները: Դրանք արդյունք են այնպիսի ականավոր հետազոտողների ստեղծագործական ոգորումների, ինչպիսիք են Լ.Ֆերը, Մ.Բլոկը, Ֆ.Բրոդելը, Է.Լեռուա Լադյուրին, Ժ.Լը Գոֆֆը, Ժ. Դյուբին և այլք¹:

«Քաղաքակրթություն» հղացքը ենթադրում է պատմական հեռանկարի (անցյալ, ներկա, ապագայի ուրվագիծ) ամբողջական-ընդհանրացված (հոլիստական) ըմբռնում: Այն բովանդակում է ընկերային համակեցության մի տարակերպ, որը ձևավորվում է համաձայն որոշակի աշխարհագրական, էթնաժողովրդագրական, պատմական, մշակութային, մտահոգևոր-կրոնական, տնտեսական, քաղաքական և այլ ենթահիմքերի: Յուրաքանչյուր դեպքում այդ ենթահիմքերն առանձնահատուկ են: Հուսկ՝ առանձնահատուկ են նաև քաղաքակրթությունները:

Դիտարկվող հղացքի ձևակերպումներում ավելի հետևողական է համարվում Ֆ. Բրոդելը: Համաձայն նրա՝ «Համակեցության կերպ և քաղաքակրթություն հղացքներն անբաժանելի են: Չի վերաբերում են միևնույն իրողությանը»: «Ըննարկել այս կամ այն քաղաքակրթությունը նշանակում է քննարկել նրա տարածքը, հողը, կլիման, բուսականությունը, կենդանիների տեսակները, բնական և այլ

* Երբ այսօր մեր պատմագիտությունը պարզունակ նկարագրության մակարդակին է, ողջ աշխարհում պատմագիտական միտքն արձանագրել ու արձանագրում է աննախադեպ հաջողություններ: Դրանցից մեկի՝ «քաղաքակրթություն» հղացքի ընդհանրական ըմբռնման և «Աննալների» պատմագիտական դպրոցի հայեցակարգային մեկնակետից Արտաշիսյան ու Արշակունյաց հարստությունների անցած ուղին քննական վերլուծության ենթարկելու, Մեծ Դայքի քաղաքակրթական հավասարակշռության ձևավորման, խարխլման և որպես դրա արդյունք՝ Դայք պետականության կործանման պատճառները բացահայտելու համարձակ քայլ է պրոֆ. Ա. Ստեփանյանի հաջողական ուսումնասիրությունների շարքը: 20-րդ դարի եվրոպական պատմագիտական մտքի ձեռքբերումների հիման վրա փորձ է արվելու բացահայտել Դայք պատմության խորքային տրամաբանությունը՝ Ք.ա. 2-րդ դարից մինչև մաշտոցյան մշակութային արարումի դարաշրջանը: Խմբ. Գողվածն ընդունվել է տպագրության 10.12.2009.

1 P.Burke, The French Historical Revolution. The Annalea School, Cambridge, 1990, pp.36-39; A.Marwick, The New Nature of History. Knowledge, Evidence, Language, London, 2001, pp.119-123; Ա.Ֆոլհաննիսյան, «Աննալների» պատմագիտական դպրոցը և դրա կերպափոխության շրջափուլերը, Պատմության հարցեր, 1(2009), էջ123-134.

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

վեմ համահայկական հանդես

կարգի ռեսուրսները: Դրանք նրա կենսեռանդի պաշարներն են»: «Յուրաքանչ-յուր համակեցություն, յուրաքանչյուր քաղաքակրթություն կախված է առկա տրնտեսական, տեխնոլոգիական, կենսաբանական ու ժողովրդագրական պայմաններից: Դրանք անմիջականորեն ներագրում են քաղաքակրթությունների ճակատագրի վրա»: «Տվյալ քաղաքակրթության ծիրում, յուրաքանչյուր մեծ դարաշրջանում գերակա է աշխարհատեսության և ընդհանրական մտակեցվածքի մեկ ներուճակ հարացույց»²:

Հայսմ՝ քաղաքակրթությունը դիտարկվում է իբրև մի համակարգ, որ գործառույթ է կոնկրետ ժամանակատարածքային և ընկերային չափույթի ծիրում՝ խնդիր ունենալով նախ և առաջ ապահովել հավասարակշիռ վիճակ՝ ինչպես իր ներքին բաղադրիչների, այնպես էլ շրջակա միջավայրի նկատմամբ³: Վիճակ, որը հաճախ բանաձևվում է իբրև քաղաքակրթական հոմեոստասիս:

Չարգացնելով մարդկային համակեցության պոստոնական հղացքը՝ քաղաքակրթություններին կարելի է վերագրել մարդակերպություն (անթրոպոմորֆիզմ): Այս դիտանկյունից նրանց գործառույթները ներկայանում են հանգույն մարդ էակի հիմնարար գործառույթներին՝ նյութափոխություն, աֆեկտիվ-հուզական ինքնիրացում և բանական ինքնակառավարում⁴:

Նյութափոխությունը պարառում է (ընդգրկում է) քաղաքակրթությունների արտադրության ոլորտը՝ համահասարակական աշխատանքների (ուղղակի կամ միջնորդված) կազմակերպում, ղեկավարում և ստացված արդյունքների բաշխում: Աֆեկտիվ-հուզականը ներկայացնում է տվյալ ընկերային համակեցության ինքնապաշտպանության և ինքնահաստատման (առաջին հերթին՝ ռազմական) ճիգերը և համապատասխան հաստատությունները: Ինչ վերաբերում է ինքնակառավարմանը, ապա այն ընդգրկում է քաղաքակրթությունների ինքնաճանաչման, ինքնահամակարգման և ինքնուղորդման գործառույթները: Դրանք սովորաբար մարմնավորվում են մի կողմից՝ մշակութային, մյուս կողմից՝ քաղաքական արժեհամակարգերի և համապատասխան հաստատությունների ձևով:

Ասվածին հավելենք, որ ինչպես առողջ մարդկանց, այնպես էլ բնականոն գործառույթ քաղաքակրթությունների պարագային ինքնակառավարումը գերակա դերակատարություն ունի մյուս բոլոր (հիմնարար և երկրորդական) գործառույթների նկատմամբ:

Սակայն մարդակերպությունն ունի նաև այլ դրսևորում: Դրա մեկնակետն այն իրողությունն է, որ ինչպես մարդ էակը, այնպես էլ քաղաքակրթությունները գոյում են՝ իրագործելով «իրենց համակարգային ավելի ընդհանրական ծրագրերը»: Ի շարքում դրանց սովորաբար առանձնացվում են երկուսը՝ ինքնապահպանությունը և ինքնալուսացումը: Երբեմն հասկանալի է վերջիններիս գուցահեռությունը մարդկային ուղեղի ձախակողմյան և աջակողմյան գործառույթների հետ: Չի առաջինը պատասխանատու է առկա տեղեկույթի հարակարգման և պահպանության, մինչդեռ երկրորդը՝ նոր տեղեկույթի հայթայթման և հին համակարգի կերպափոխման համար:

Համակեցական կյանքի անդրադարձով՝ այդ բևեռներին համապատասխանում են քրմական և ռազմական գործառույթները⁵: Եվ դրանցից որևէ մեկի բացարձակացումը հղի է համակարգային անշրջելի փոփոխություններով ու խաթարմամբ: Ի հաստատումն ասվածի՝ հետազոտողները հաճախ բերում են հին

2 F.Braudel, A History of Civilizations, New York, 1995, pp. 8,16,18,21

3 L.Bertalanffy, General System Theory. Foundations, Development, Applications, New York, 1976, pp. 48-56.

4 Պոստոնը դրանք վերագրում է մարդկային եռակազմ հոգուն: Յայդմ՝ մշակել է պետական-համակեցական կառույցի իր տեսլականը [Rep.,IV, 420 b-e]: Մանրամասն տես՝ J.Wild, Plato's Theory of Man, Cambridge, 1964, pp.32-35; Ա.Ստեփանյան, Պլուտինոս (Մշակութային ինքնարարումի ճիգը), Պլուտինոս, ԵՃՆԵՂԵՂԵՂ, Գիրք V, Հաղազս Բանականի, Եր., 1999, էջ XVIII-XX:

5 H.Frankfort, H.A.Frankfort, J.Wilson, Th.Jacobsen, Before Philosophy. The Intellectual Adventure of Ancient Man, Baltimore, 1967, pp.49-51.

Եգիպտոսի և Միջագետքի օրինակը, որտեղ քրմության և զինվորականության հակոտնյա հարաբերություններով էին պայմանավորված երկրի պարբերական բարձրացումներն ու անկումները: Քաղաքակրթության բնականոն վիճակն ապահովվում էր միայն դրանց ներդաշնակ համադրությամբ:

Ասվածը հաստատվում է նաև այլ քաղաքակրթությունների փորձով: Ինչ վերաբերում է համադրության չափին և կշռույթին, ապա դրանք մեկընդմիջտ տրված չեն: Ամեն անգամ հաստատվում են ի տեղի և ժամանակի:

Մարդակերության հետ սերտ աղերս ունի նաև քաղաքակրթությունների ժամանակաշին ծավալման հիմնախնդիրը: Դա սովորաբար լուսաբանվում է երկու դիտանկյունից: Նախ, քաղաքակրթությունները նույնպես ժամանակավոր գոյացություններ են, ուստի անցնում են ծագման, ծաղկման, անկման շրջափուլերով⁶: Եվ ապա՝ մահանում ու տեղը զիջում են այլ քաղաքակրթությունների: Այլոքեն՝ մարդկության քաղաքակրթական պատմությունը շարունակվում է, և նոր քաղաքակրթությունների հնարավորությունը միանգամայն ենթադրելի է և անգամ կանխատեսելի:

Մյուս կողմից, քաղաքակրթությունները գոյում են (գոյատևում են) ըստ ժամանակի բազում համընթաց չափույթների: Դրանցից հատկապես կարևորվում են հետևյալ երեքը՝ կարճ տևողությունը (*curte duree*), միջին տևողությունը (*midi duree*) և երկար տևողությունը (*longue duree*): **Առաջին** չափույթը պարառում է առտնին, հիմնականում քաղաքական գործընթացները: Սովորաբար ծավալվում է տասնամյակի ծիրում: **Երկրորդ** ավելի երկար է: Ծավալման միջավայրը (առավելագույնս) հարյուրամյակն է, զի պարառում է համակեցության «տնտեսական իրավիճակներն ու տեղաշարժերը»՝ արտադրական հմտություններ և գործիքներ, ապրանքային շրջանառություն և գներ, տնտեսվարության համալիրներ և շուկաներ: Իսկ **երրորդը** ներկայացնում է բուն քաղաքակրթական ժամանակը, որն առնչվում է համակեցության արմատական-համակարգային փոփոխություններին և ծավալվում հրնթացս հարյուրամյակների (*longue duree*): Անգամ՝ հազարամյակի կտրվածքով՝ ընտանիք և համակեցական կառույց, կրոն և մշակութային արժեհամակարգ, ընկերային հոգեբանություն և մտակեցվածք: Պատահական չէ, որ տվյալ չափույթը երբեմն անվանում են համակեցական տեսակի ինքնութեանական ժամանակ: Այս պարագային է, որ «ժամանակի հոսունությունն ասես կանգ է առնում», և նրա ծիրում սկսում են կարևորվել «կայունության ռիթմերը»: Նման կենսընթացը բնորոշելու նպատակով հետազոտողները (հարկավ, ոչ առանց չափազանցության) երբեմն օգտագործում են անշարժ պատմություն հղացքը (*histoire immobile*)⁷:

Ժամանակի այս չափույթների միջև գոյություն ունեն խորագույն պատճառահետևանքային, տիպաբանական, համակարական (սիմպաթետիկ) և այլ կարգի լծորդություններ: Ի հետևանս դրա՝ առտնին իրադարձությունների ծիրում կարող են բացահայտվել քաղաքակրթական հեռանկարներ և, ընդհակառակը, քաղաքակրթական տեղաշարժերը կարող են բանալի դառնալ առտնին կյանքի իմաստների համալիր ընկալման համար⁸:

Տարածական ծավալումը նույնպես քաղաքակրթությունների կարևորագույն չափորոշիչներից է: Տարբերակվում են տեղական (լոկալ), ընդգրկում (գլոբալ),⁶ Քաղաքակրթությունների ժամանակաշին այս շրջափուլն Օ. Շպենգլերի համակարգում ունի անդառնալի (անգամ ճակատագրական) իմաստ ու բովանդակություն: Նրանք անպայմանորեն պետք է անկում ապրեն: Տե՛ս **Օ.Շպենգլեր**, *Закат Европы*, Ростов-на-Дону, 1998, с.168-172; Այլ է Ա.Թոյնբրի մոտեցումը: Նա գտնում է, որ փակ շրջափուլը անխուսափելիություն չէ և դրա վրա կարելի է ներագրել ու փոխել: **A. J. Toynbee**, *A Study of History*, Oxford, v.2, 1934, pp. 34-39.

⁷ **F. Braudel**, *Ecrits sur l'histoire*, Paris, 1969, pp.44-56.

⁸ **F. Braudel**, *A History of Civilizations*, New York, 1993, pp.33-36; **И. Валерстайн**, *Изобретение реальностей времени-пространства (К пониманию наших исторических систем)*, *Время мира*, 2(2001), с.102-116. **Ա. Ստեփանյան, Ե.Մարգարյան**, ժամանակի կառույցը Ֆ.Բրոդելի պատմահայեցողության ծիրում, *Պատմություն և կրթություն*, 1/2 (2005), էջ33-42.

համընդգրկուն (տոտալ) քաղաքակրթություններ⁹: Առաջինները ծավալվում են կոնկրետ (սահմանափակ) աշխարհագրական տարածքում: Հաճախ միաէթնիկ են ու միամշակութային: Երկրորդների ընդգրկման տարածքը ծավալում է: Դրանք հաճախ բազմաէթնիկ են և բազմամշակութային: Ունեն իրենց քաղաքակրթական կորիզը (core state), որի կրողը գերակա էթնոսն է (կամ էթնոսները)՝ իր վարչաքաղաքական, տնտեսական, ռազմական, կրոնական, մշակութային գերակա դերակատարությամբ: Հայդը՝ միանգամայն արդարացի է այն պնդումը, համաձայն որի. «Քաղաքակրթությունից քաղաքակրթություն դրանք տարբերվում են իրենց կառույցով և դերակատարությամբ»¹⁰: Եվ միշտ չէ, որ գերակայությունը դրսևորվում է զուտ ուժային թելադրանքի ձևով: Հաճախ ավելի ներգործուն են թելադրանքի «քողարկված տարակերպերը»: Ինչ վերաբերում է երրորդ տարատեսակին, ապա դրա ուրվագծերը բացահայտվում են դեռևս աղոտ ու տարտամ, զի միտված են ապագային, երբ հնարավոր կլինի խոսել մարդկության մասին՝ իբրև անկապտելի քաղաքակրթական միավորի:

Ասվածի դիտանկյունից, կարծում ենք, պատեհ է կրկին անդրադառնալ քաղաքակրթական հոմեոստասիսին՝ հատկանշելով այն իբրև համակեցական հարաբերությունների մի կայուն ալգորիթմ, շնորհիվ որի տվյալ քաղաքակրթությունն ի գորու է համարժեք պատասխաններ մշակել (responses) արտաքին և ներքին մարտահրավերներին (challenges): Առանց հոմեոստասիսի, պատմության ժամանակը կարող է «փշուր-փշուր» լինել, իսկ նրա իրադարձութենական հարակարգը՝ վերածվել «դիպլոմատների իմաստագուրկ շարանի»¹¹:

Նման տրամաբանությամբ՝ հոմեոստասիսը ընկալվում է իբրև այս կամ այն քաղաքակրթության հիմնարար չափույթներից: Ընդամին, տարբերակվում է վերջինիս երկու հիմնական տարակերպություն՝ ներհանրութային և արտահանրութային: Դրանց փոխլրացումը քաղաքակրթական տվյալ համակարգին հաղորդում է կայունություն և գործառական արդյունավետություն:

Հետագոտողներն առանձնակի ուշադրություն են դարձնում քաղաքակրթությունների մարտահրավերների և պատասխանների որակական կողմին՝ համոզված, որ սրանով է շատ առումներով պայմանավորված դրանց տիպաբանությունը:

Պատմության փորձը հուշում է, որ մարտահրավերների պատասխանները կարող են կառուցված լինել ըստ համակեցության այս կամ այն բաղադրիչի գերակայության՝ իշխանական կառույց, մշակույթ, կրոն, հասարակական հոգեբանություն կամ տնտեսություն: Հայդը՝ քաղաքակրթությունները (կամ դրանց ենթատեքստերը) լինում են իշխանակենտրոն, մշակութակենտրոն, կրոնակենտրոն, տնտեսակենտրոն և այլն: Ընդամին, առկա տիպաբանությունը բնավ էլ անփոփոխ չէ: Այն կարգաբերվում է կամ ինքնաշխատ (ավտոմատ) ռեժիմով, կամ ըստ որոշակի հասարակաշինական ծրագրերի:

Յուրօրինակ տիրույթ է քաղաքակրթությունների փոխհարաբերությունների հիմնախնդիրը: Դրանք ծավալվում են պատմական ժամանակի և տարածության ծիրում, որտեղ «գոյանում են փոխշփումի և փոխներգործության դաշտեր»¹²: Քաղաքակրթությունների որակական տարբերությունները տեղիք են տալիս դրանց տարանեռ առնչություններին՝ սկսած փոխմիտումից ընդհուպ փոխլրացում: Առաջին տարբերակը հաճախ ուղեկցվում է քաղաքակրթությունների բախմամբ (clash), որն առավելաբար պարառում է նրանց հաստատութենական մակարդակը՝ իշխանական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ տիպի կառույցներ: Երկրորդ տարբերակը պարառում է քաղաքակրթությունների արժեհամա-

9 F Braudel, Grammaire des civilisations, Paris, 1993, pp.66-71.

10 S.Huntington, The Clash of Civilizations and Remaking of World Order, New York, pp.138-143

11 Ասվածը ներհատուկ է նաև ընկերային համակարգերին: Տես F.Braudel, op.cit., pp.194-196.

12 Ա.Ստեփանյան, Ե.Մարգարյան, անդ, էջ 35:

կարգերը: Դրանք ծավալվում են ժամանակի երկար տևողությունների ծիրում՝ ընդունակ վերընձնորդվելու նոր էթնիկ և քաղաքակրթական միջավայրերում. «Հաճախ հաստատվում են մի տեղում, իսկ ապա շարունակում իրենց ուղին (տարիների և հարյուրամյակների տևողությամբ)՝ երբեք չդադարեցնելով շրջապատույտը: Երբեմն մոռացվում են, սակայն՝ կրկին վերածնվում»¹³: Ի հետևանս՝ տեղի է ունենում քաղաքակրթությունների փոխադարձ լրացում (complementation):

Հնարավոր է, սակայն, երրորդ տարբերակը, որի հնարավորությանը հպանցիկ անդրադարձանք վերը: Դա ենթադրում է քաղաքակրթական տվյալ միավորի ինքնալրացումը (self-complementation): Այն կազմակերպում է «սեփական ալյացման գործընթացը»՝ համաձայն հասարակաշինական տեսությունների ու կոնկրետ ծրագրերի: Դրանց ներդրմամբ կյանքի տարբեր ասպարեզներում հաղթահարվում են ծերացման միտումները, և բացվում են համակեցական կենսաբանորի ծավալման նոր հեռանկարներ:

Հենց նման քաղաքակրթություններին էլ ներհատուկ է սեփական կառույցի բարդացման միտումը: Արդյունքը կարող է դառնալ նրանց «հիբրիդացումը» և քաղաքակրթական նոր տիպաբանության ձևավորումը, որը միտված է համադրելու տարբեր քաղաքակրթությունների հիմնարար չափույթները՝ ի տեղի և ժամանակի: Արդի եզրաբանությամբ՝ վերջինս հաճախ որակվում է իբրև *հատյալ քաղաքակրթություն* (torn civilization): Նկատի է առնվում այն հանգամանքը, որ հիբրիդացման կարևոր նախապայմանը ինքնավերափոխման կամային ճիգն է՝ իրագործված խոշոր անհատականությունների և նրանց աջակից ընտրախավերի (ներգործուն փոքրամասնություն) կողմից. «Այն սովորաբար իրագործվում է այնպիսի համակեցական միջավայրերում, որոնք գիտակցում են սեփական վիճակի անբավարարությունը և ձգտում անցում ապահովել դեպի առավել զարգացած տեխնոլոգիական և մշակութային վիճակներ»¹⁴:

Հարկավ, քաղաքակրթությունների բովանդակության և կառույցի մասին ասելիքը կարելի է լրացնել նոր դիտանկյուններով: Սակայն կանգ առնենք: Ասվածը, կարծում ենք, բավարար է մեր հիմնական հետազոտական նպատակի համար: **Այն է՝ լուսաբանել պատմական Մեծ Հայքի տեղական (լոկալ) քաղաքակրթությունը Ք.ա. II-I դարերում:** Շուրջ երկուհարյուրամյա մի դարաշրջան, երբ հայոց միջավայրում ձևավորվել ու զարգացել է քաղաքակրթության իշխանակենտրոն տարատեսակը: Այն խնդիր ուներ հնարավորինս սահմանափակել դիպվածի դերը Հայոց պատմության ծիրում:

Շնորհիվ պատմագետ-հայագետների նախորդ սերնդի հետազոտական ջանքերի՝ դարաշրջանի լուսաբանությունը դրապաշտական ընկալումների դիտանկյունից այլևս փաստ է: Ուստի՝ խնդիր չունենք սևեռվելու դրա առանձին մանրամասների վրա: Մեր նպատակն այլ է՝ համակարգել դիտարկվող քաղաքակրթական տարակերպը հելլենիստական և արդի հումանիստար պատկերացումների լուսիններքո: Եվ այդու՝ փորձել Հայոց պատմության իրողությունները դիտարկել քաղաքակրթական երկար տևողության ծիրում:

2. Ներհանրությանի հավասարակշռության ձևավորումը

Հելլենիստական քաղաքակրթությունը սկզբնավորվել է Ք.ա. IV դարում՝ հարդյունս Ադեքսանդր Մակեդոնացու արշավանքների: Այն արգասավորվել է Արևմուտքի (Հունաստան) և Արևելքի արժեհամակարգերի համադրման ճիգով: Ասվածը վերաբերում էր համակեցական կյանքի համարյա բոլոր տիրույթներին՝ սկսած առտնին գործառույթներից մինչև աշխարհատեսություն, տնտեսությունից

13 Ф.Бродель, Средиземное море и средиземноморский мир в эпоху Филиппа II. События. Политика. Люди, т.2, Москва, 2004, с.593
14 S. Huntington, op. cit., p.139.

մինչև գեղագիտական ինքնագիտակցություն, կառավարման համակարգերից մինչև աստվածախոսություն: Ընդամին՝ համադրությունն ամենուրեք չէր ընթանում ըստ միևնույն սցենարի, այլ ամենուրեք ուներ «ի տեղի» բովանդակություն և իմաստ: Այլ խոսքով՝ հունականությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հանդիպում-համադրվում էր տեղական կոնկրետ ավանդույթների, կենսակերպերի և կառույցների հետ: Եվ դա մեծապես ներազդում էր համադրության որակական չափույթների վրա, զի ամեն անգամ ծնվում էր նորը¹⁵:

Այդուհանդերձ, դա ամենևին չի խանգարում խոսել նաև հելլենիստական «ընդհանրական տեքստերի» մասին: Դրանք վեր էին «տեղական մասնավորություններից»՝ հունարեն լեզու, քաղաքային կյանք, վարչական համակարգ, քաղաքագիտական միտք, միջազգային իրավունք, արտադրական տեխնոլոգիաներ, առևտրական ուղիներ, շուկաներ, ռազմավարություն և այլն: Վերջիններիս ներգործությամբ «տարասեռությունները միավորման կայուն միտում էին ցուցաբերում»: Այս դիտանկյունից հելլենիզմը ներկայանում է իբրև յուրօրինակ անդրհամակարգ (metasystem)՝ իր կառույցով ու բովանդակությամբ¹⁶:

Կցանկանալիս ուշադրություն հրավիրել հելլենիզմի քաղաքակրթական համադրության մեկ այլ առանձնահատկության վրա: Թեպետ դրան մասնակցում էին համակեցական կյանքի բոլոր հիմնակագմիկ բաղադրիչները, գերակա դերակատարությունը, այնուամենայնիվ, պատկանում էր ներհանրությամբ հարկադրանքին՝ ռազմավարչական, տնտեսական, կրոնաքարիզմատիկ: Պետական կառույցը և նպատակամետ հասարակաշինությունը հույժ հատկանշական էին հատկապես վաղ հելլենիզմին¹⁷: Ուստի՝ վերջինս շատ հաճախ բնութագրվում է իբրև «ռազմաքաղաքական իրադրություն»: Բնութագիր, որը, հարկավ, չափազանցված է: Սակայն գուրկ չէ ճշմարտության հատիկից:

Իշխանակենտրոնությունը հելլենիզմի ինչպես առավելությունն էր, այնպես էլ խոցելի կողմը: Առավելությունը դրսևորվեց հատկապես վաղ շրջանում՝ Ք.ա. IV-III դարերին: Շնորհիվ դրա ընձեռած հնարավորությունների (ուղղահայաց իրավավարչական հրամայական, սովոր պաշտոնեություն, մարտունակ բանակ)՝ Մակեդոնացու հետնորդներին հաջողվեց միավորել հսկայական տարածքներ (Փոքր Ասիայից ու Եգիպտոսից ընդհուպ Հնդկաստան) և հաղորդել դրանց միասնական քաղաքակրթական ընթացք և ռիթմ: Դա իր հերթին տեղիք տվեց անօրինակ գարգացման:

Ինչ վերաբերում է խոցելիությանը, ապա դա դրսևորվեց ավելի ուշ՝ Ք.ա. II-I դարերին: Համակեցական կյանքի տարբեր ասպարեզների խիստ կենտրոնացումը և մենաշնորհայնացումը հանգեցրեց լճացման, իսկ ապա՝ անկման: Դրանք էլ իրենց հերթին զուգահեռվեցին «տեղական-ազգային» միտումների գորեղացմանը¹⁸:

Նման միտումից կարողացան խույս տալ միայն հելլենիստական «ծայրամասային միավորները»: Դրանք համեմատաբար միաէթնիկ էին և մշակութապես միասնական: Իշխանակենտրոնությունը դրանցում բացարձակ կերպարանք չստացավ: Համակեցական կյանքը համեմված էր դարեր ի վեր հաստատված արժեքային և իշխանական ավանդույթներով, որոնք լուրջ հակակշիռ էին բոլոր տեսակ ծայրահեղություններին:

Ավաճող լիովին վերաբերում էր նաև Մեծ Հայքին, որտեղ հելլենիզմն իր մակրոքաղաքայինություններով ու տեղատվություններով շարունակվեց շուրջ վեց հարյու-

15 К.К.Зельин, Основные черты эллинизма, ВДИ, 4(1953), с.146-148;

16 E.Badian, Alexander the Great and the Unity of Mankind, History, 2(1958), pp.424-444; H.Baldry, The Unity of Mankind in Greek Thought, Oxford, pp.11-19.

17 F.Schachermeyr, Alexander der Grosse. Das Problem seiner Personalichkeit and seines Wirken, Wien, 1973, S.261-264.

18 P. Leveque, Le monde hellenistique, Paris, 1969, pp.191-194.

րամյակ: Եվ անկումից հետո էլ իսպառ չվերացավ, այլ տեղը զիջեց նոր քաղաքակրթական կառույցին՝ մշակութակենտրոն քրիստոնեությանը:

Արտաշես I-ի բարենորոգումները

Հելլենիստական իշխանակենտրոնությունը Մեծ Հայքում վերջնականորեն հաստատվեց Ք.ա. II դարում՝ Արտաշես I արքայի ջանքերով (Ք.ա. 189-160 թթ.): Ականավոր պետական այս այրը գահակալել է հայոց պետության բախտորոշ շրջափուլում և իր տարաբնույթ նորամուծություններով նոր ռիթմ է հաղորդել նրա պատմությանը:

Դրանց համընդգրկուն բնույթը և մշակվածությունը հիմք են տալիս մտածելու, որ արքան առաջնորդվել է նախապես մշակված հստակ ծրագրով՝ ըստ հելլենիստական «հասարակաշինական փորձառության»: Փորձառություն, որ տեսականացվել էր դարաշրջանի իմաստասիրական դպրոցներում: Խոսքն առաջին հերթին Ստոիկյան դպրոցի մասին է, որի ազդեցությունը հույժ զգալի էր հելլենիստական քաղաքական գիտակցության վրա:

Արտաշես I-ի գործունեությանը բավական հանգամանորեն անդրադարձել են ինչպես անտիկ հեղինակները, այնպես էլ մերօրյա հետազոտողները: Ուստի՝ մեր խնդիրն այլ է. տալ դրա համադրական-համակարգային լուսաբանումն ու գնահատականը՝ ելնելով հումանիտար մտքի արդի ըմբռնումներից: Ի մասնավորի, նպատակ ունենք դիտարկել հետևյալ կարևոր հանգամանքը. ինչպիսի կերպավորության է ենթարկվել հայոց ավանդական (նահապետական) համակեցական միջավայրը դարաշրջանի նորագույն մտահոգևոր և արտադրական տեխնոլոգիաների ներգործությամբ:

Նման գործընթացներն արդի հետազոտություններում հաճախ ներկայացվում են իբրև անցում կենսաշխարհից (lifeworld) դեպի համակարգ (system): Առաջին դեպքում հանրույթն ապրում է հիմնականում ինքնակրկնության ալգորիթմով: Նա ինքնահայում է «ներսից», զի գերակայում են առասպելաէպիկական աշխարհատեսությունը և սրբազնային արժեհամակարգը¹⁹: Այս միջավայրում ներհանրությանը հարաբերությունները, որպես կանոն, կարգավորվում են ըստ սովորության իրավունքի (նախնյաց բարքեր=mores maiorum): Փոքր-ինչ սևուսպիտակային ձևակերպմամբ՝ կենսաշխարհը ներկայանում է իբրև. «Ընկերային կյանք, որն ինչպես կյանքն ընդհանրապես, ընդունակ է ինքնակազմակերպման՝ չգիտակցված, ինքնաշխատ հարմարվողության ճանապարհով՝ կարիքների անմիջական ճնշման ներքո, բայց ոչ ըստ հայեցողական մտածողությամբ մշակված ծրագրերի»²⁰:

Երկրորդ դեպքում հանրույթն ապրում է ծրագրված ինքնալսացման ալգորիթմով և ինքնահայում է դրսից: Գերակայում է բանական (ռացիոնալ) աշխարհատեսությունը, և հանրույթը պատրաստ է ինքնակազմակերպվել և ինքնակառավարվել իբրև համակարգ: Ներհանրությանը հարաբերություններն այս պարագային կարգավորվում են առավելաբար ըստ դրական իրավունքի նորմերի (գրավոր օրենքներ=leges)。「Դրանք ենթադրում են նորմատիվ ստանդարտներ, որոնց կիրարկմամբ կատարվող գործողությունները կամրջում են այն բացը, որ գոյություն ունի «առկայի» և «անհրաժեշտի», փաստի և արժեքների, իրական կենսական պայմանների և գործառույթի արժեքային կողմնորոշման միջև»²¹:

Հարկավ, պատմականորեն կենսաշխարհը նախորդում է համակարգին: Սակայն ավելի հասուն համակեցական միջավայրերին հատկանշական է դրանք ներդաշնակորեն համադրելու միտումը: Դա վերջիններիս ինքնահամակարգման

19 J. Habermas, The Theory of Communicative Action, v.2 (Lifeworld and System, A Critique of Functional Reason), New York, 1993, pp.131.

20 E. Durkheim, The Division of Labor in Society, New York, 1993, p.131.

21 E. Durkheim, op.cit., p.289.

կարևոր խթաններից է, որն ի գորու է կյանքի կոչել քաղաքակրթական տարբեր ձեռքբերումները²²: Հենց այս դիտանկյունից էլ ցանկանում ենք լուսաբանել Արտաշես I-ի դարաշրջանում Մեծ Հայքում իրագործված հասարակաշինական ծրագիրը:

Ոչինչ հայտնի չէ այս գահակալի կյանքի վաղ շրջանի մասին: Թերևս Մեծ Հայքի Երվանդականների կրտսեր շառավիղներից էր: Գտնվում էր Մելիկյան արքունիքում, հավանաբար, իբրև պատանդ: Նույն կարգավիճակում էր նաև Ջարեհը, որը Ծովքի Երվանդականներից էր: Անտիոքոս III Նիկատորից նրանք նշանակվեցին Մեծ Հայքի և Ծովքի ստրատեգոս-կառավարիչներ: Եվ հենվելով սելևկյան զենքի և տեղական ընդդիմության վրա՝ վերջ դրեցին Երվանդականների տիրապետությանը: Դա Ք.ա. 201 թվականն էր:

Ժամանակակիցներից ոմանք, բնական է կարծել, այս իրադարձություններին հույժ բացասաբար էին վերաբերվում: Սակայն այն, ինչ հետագայում իրագործեցին այս այրերը, նրանց լիովին արդարացրեց «պատմության դատաստանի առջև»: Ասվածն ավելի քան վերաբերում է Արտաշեսին:

Ք.ա. 190 թվականին Մելիկոս III-ը Մագնեսիա քաղաքի մատույցներում ջախջախիչ պարտություն կրեց հռոմեական բանակից: Օգտվելով դրանից՝ Արտաշեսն իրեն հռչակեց անկախ: Հռոմը ճանաչեց նրան իբրև ինքնիշխան գահակալ: Հիմքեր կան մտածելու՝ նաև հռոմեական ազգի բարեկամ (amicus populi Romani): Ամբաստանելով իր իշխանությունը՝ Արտաշեսը հիմք դրեց հայոց նոր արքայատոհմի, որն իր անունով էլ կոչվեց Արտաշիսյան:

ա. Էթնահամակեցական սահմանի հաստատումը

Արտաշես արքային է վերագրվում հայոց ընկերային կյանքի գրեթե բոլոր ասպարեզների բարեփոխությունը: Հարդյունս դրա, ինչպես նշվեց վերը, Մեծ Հայքում սկզբնավորվեց հելլենիստական իշխանակենտրոն քաղաքակրթության մի ուրույն տարատեսակ:

Արքայի առաջին քայլերը միտված էին այն բանին, որպեսզի հստակ ամրագրի հայոց համակեցական համակարգի երկու հիմնակազմիկ բևեռները՝ ծայրամասը և կենտրոնը: Նպատակին հետամուտ՝ նա ռազմարշավներ է ձեռնարկել Մեծ Հայքի տարբեր ուղղություններով և հետ գրավել այն ծայրամասերը, որոնց Երվանդականների վերջին շրջանում տիրել էին հարևանները: Այդ առումով կարևոր է հույն աշխարհագետ Ստրաբոնի վկայությունը. «Մեդագիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը, Բաստրոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի ստորոտի հողերը, Խորձենեն, Գոգարենեն, որը Կուրի մյուս ափին է, խալիբներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դարքսիենեն, որոնք սահմանակցում են Փոքր Հայքին կամ դրա մասն են, կատաոններից՝ Ալլիսենեն և Անտիտավրոսի շուրջ ընկած հողերը, ասորիներից՝ Տամորիտիսը» [Strabo, XI, 14, 5]²³: Հարկավ, դա տևական գործընթաց էր իր հաղթանակներով և ժամանակավոր անհաջողություններով, որի մանրամասների մասին քիչ բան գիտենք: Սակայն վերջնական արդյունքները միանգամայն հստակ են. արքային հաջողվեց հաստատագրել հայոց համակեցության տարածական սահմանները: Հայդմ՝ ընկերային գիտակցության և փորձի մեջ սկսեց կարևորվել ծայրամասի դերակատարությունը:

Արքայի հաջորդ քայլը միտված էր երկրի նոր մայրաքաղաքի հիմնմանը: Արարատյան դաշտում՝ ինը բլուրների վրա, նա կառուցեց «Մի մեծ և չափազանց գեղեցիկ քաղաք: Այն անվանվեց արքայի անունով՝ Արտաշատ և հռչակվեց մայ-

22 J. Habermas, op.cit., pp.117-119.

23 Այս մասին ավելի հանգամանալից տես՝ Գ.Սարգսյան, Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք, ԴԺՊ, հ.1, եր., 1971, էջ 235-244:

րաքաղաք» [Plut., Lucul., 33]: Այդ մասին վկայում է նաև հայկական պատմական ավանդույթը. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխա եւ Մեծամար, են հաճեալ ընդ բլուրն՝ շինե քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ» [Խոր., II, 49, 4]:

Համաձայն Պլուտարքոսի՝ քաղաքի տեղանքն ընտրել էր կարթագենացի հրուշակավոր գորավար Հաննիբալը, որն իր թափառ կյանքի բերումով ապաստանել էր հայոց արքունիքում և «բազմաթիվ օգտավետ գործերում խորհրդատու էր Արտաշեսին»²⁴: Գտնելով «չօգտագործված, բայց հարմարավետ և հոյժ հաճելի մի վայր՝ նա հենց տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը» [Plut., Lucul., 31]: Դժվար չէ նկատել, որ գորավարը գործում էր ըստ հնագույն քաղաքաշինական փորձի, որը հույները փոխառել էին կարթագենցիներից. հիմնադիրը իր օգնականների հետ ի տեղի (հաճախ հենց հողի վրա) հատակագծում էր քաղաքի հրապարակը, փողոցները, տաճարները, տները, արտաքին պատերը: Իսկ ապա սկսվում էին կառուցողական աշխատանքները²⁵:

Հավելենք, որ Արտաշատը նաև երկրի թագավորանիստն էր [Strabo, XI, 14, 6]: Նրա ինը բլուրներից մեկի վրա կառուցված էր արքայական դղյակը, որը պատով առանձնացած էր մնացած քաղաքից: Այստեղ էր գտնվում արքունիքն իր բազմաթիվ գործակալություններով և դիվանով:

Մեծ Հայքի տարբեր աշխարհներում ու գավառներում (Նորշիրական, Բագրևանդ, Աղիովիտ, Վանանդ, Հավնունիք) կառուցվել են նույնանուն մի շարք քաղաքներ՝ Արշատ, Չարեհավան, Չարիշատ: Այդ նպատակով, համաձայն նույն հնագույն քաղաքաշինական փորձի, կատարվել է համաբնակեցում (սյունօյկիսմոս)²⁶: Արքայական հատուկ հրովարտակով երկրի տարբեր վայրերից արհեստավորներ և առևտրականներ են բերվել: Միավորվելով՝ նրանք կազմել են քաղաքային ինքնավար համայնքը՝ իր տեղական օրենքներով, խորհրդով և վարչությամբ, դատարանով և պաշտոններով՝ քաղաքագլխի առաջնորդությամբ: Կարևոր դեպքերում հրավիրվել է քաղաքի ժողովը, որին մասնակցել են բոլոր լիիրավ քաղաքացիները: Սակայն գերակայում էր քաղաքային ավագանին՝ պետական բարձր պաշտոնյաներ, հարուստ առևտրականներ և արհեստավորներ:

Քաղաքային միջավայրի իմաստանշանային և իրավական սահմանը նրա պատերն ու դարպասներն էին: Դրանցից անդին ծավալվում էր հարակա գյուղատնտեսական տարածքը, որը սկզբնաղբյուրներում կոչվում էր քաղաքուղաշտ: Այստեղ գտնվում էին դաստակերտներ ու ագարակներ, որոնք պատկանում էին քաղաքին կամ առանձին քաղաքացիներին: Դրանք խնդիր ունեին քաղաքն ապահովել անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքներով²⁷:

Մերօրյա եզրաբանությամբ՝ հելլենիստական քաղաքներն «ազատ ձեռներեցության» միջավայր էին: Պետությանը նրանք վճարում էին սահմանափակ ուղղակի հարկեր: Իսկ մայրաքաղաքն ընդհանրապես ազատված էր դրանցից: Ի հավելումն՝ արքան «չէր միջամտում քաղաքների ներքին գործերին», այլ բավարարվում էր սոսկ *նամակ-խորհուրդներով*²⁸:

24 Արտաշես I-ի բարեփոխությունների մեջ Հաննիբալի դերակատարության մասին տես **И.Ш.Шифман**, Ганнибал в Армении, ИФЖ, 4(1980), с.257-261.

25 Քաղաքաշինական փորձը հունական միջավայրում տեսականացվել և դիտարկվում էր իբրև քաղաքական իմաստասիրության առանձին մարզ: Տես **В.П.Яйленко**, Платоновская теория основания полиса и эллинистическая колонизация, кн.-Платон и его эпоха (ред. **Ф.Х.Кессиди**), Москва, 1979, с.172-190.

26 **Գ . Սարգսյան**, Անդ, էջ 540-542; Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա.VI-մ.թ.IV դդ.), Եր., 2005, էջ 205-216:

27 **С.Т.Еремян**, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 3(1953), с.12-14; **Г.Х. Саркисян**, Тигракерет. Из истории древнеармянских городских общин, Москва, 1960, с.7-9.

28 **V.Ehrenberg**, The Greek State, New York, 1995, pp.191-206; **Г.А.Кошеленко**, Греческий полис на эллинистическом Востоке, Москва, 1979 с.152-160.

Հայդմ՝ հաստատվել էր նաև քաղաքային համայնքի անդամների իրավական բարձր կարգավիճակը: Անդրադառնալով դրան՝ Պատմահայրը բանաձևում է. «Հրաման տայ՝ եւ քաղաքացեաց մարդկան արգոյ եւ պատիւ լինել առավել քան զգեղջկաց. եւ գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս իշխանս. եւ քաղաքացեաց մի կարի առ գեղջաքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ [...]» [Խոր., II, 8, 41]: Այս կերպ կարևորվեց հայոց համակեցական միջավայրի մյուս բևեռը՝ մայրաքաղաք-կենտրոնը:

Բացի գուտ գործառական նշանակությունից, համոզված ենք, Արտաշատին վերագրվում էր նաև բնագանգական բովանդակություն: Չի դարաշրջանի աշխարհատեսության ծիրում «ամեն մի ճշմարիտ գոյաձև» ուներ իր տիեզերական հեռանկարը:

Այս կապակցությամբ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա: Դասական Հունաստանում մշակվել և հելլենիստական մտավոր միջավայրում հույժ ազդեցիկ էր բնագանգական մի տեսություն, որը բոլոր գոյութենական ձևերի հիմքում տեսնում էր տիեզերական նախատարրերից որևէ մեկը (կամ դրանց համակցությունը)՝ հող, ջուր, օդ և հուր: Դրանք, մի կողմից, լծորդվում էին հիմնարար երկրաչափական ձևերին՝ քառանկյունի (ուղղանկյունի), շրջան (բոլորակ), եռանկյունի, շեղանկյուն: Մյուս կողմից՝ մարդ արարածի (և տիեզերքի) հիմնակազմիկ որևէ բաղադրիչի՝ մարմին, կենսեռանդ, հոգի և բանականություն²⁹:

Արտաշատը «ճշմարիտ գոյաձև» էր: Եվ կարծում ենք, հենց դա նկատի ունի Ստրաբոնը՝ հատկանշելով, որ այն. «Տեղադրված է թերակղզի ձևավորող մի ելուստի վրա: Քաղաքային պատը ողողում է գետը: Ողողում է, բացառությամբ պարանոցի, որն ամրացված է խրամով և ցցապատնեշով» [Strabo, XI, 14, 6]: Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ հույն աշխարհագիրը հայոց նոր մայրաքաղաքի իմաստային ծարաքը լծորդում է եռանկյունում, որը բնագանգական իմաստով խորհրդանշում էր օդը և հոգեկան ակտիվ գործունեությունը: Սակայն դա դեռ ողջ ճշմարտությունը չէ. Արտաշատի բնագանգական կեցության մյուս կարևոր բաղադրիչը ջրի նախատարրն էր: Այլ խոսքով՝ շրջանը, կենսեռանդը և (առհասարակ) առ հավասարակշռություն միտված սահքը:

Արտաշատյան եռանկյունու և շրջանի բնագանգական համադրությունը, անտարակույս, հակադրված էր Մեծ Հայքի մնացած տարածքին, որը ներկայացնում էր հողի նախատարրը, այսինքն՝ քառանկյունին կամ մարմնական սկիզբը: Նույն բնագանգական տեսության համաձայն՝ վերջինս լծորդված էր «կայուն անշարժությամբ»:

Տարասեռ բնագանգական չափումները ներկայացնում էին Մեծ Հայքի (այժմ արդեն բարդ) ամբողջությունը: Այն մարդակերպ էր, և նրա ծիրում, կրկնենք, գերակայում էր եռանկյունի-հոգին: Ասվածի իմաստը լիովին բացահայտվում է Պղատոնի մի տարողունակ բանաձևի լույսի ներքո. «Բայց եթե ինչ-որ բան ամբողջ է, արդյո՞ք նա չպետք է ունենա իր սկիզբը, միջինը և ավարտը: Կարո՞ղ է նա գոյել, եթե չունի այս երեք բաղադրիչները» [Plato, Parm., 145a]³⁰: Սկիզբը և ավարտը հայոց միջավայրում համադրելի էին համակեցության սահմանային վիճակներիին (ծայրամաս), իսկ միջինը՝ կենտրոն-մայրաքաղաքին: Բնագանգական այս ըմբռնումը նույնպես հաստատում է մեր ելակետային թեզը. Արտաշես արքան նպատակ ուներ արմատապես կերպափոխել հայոց «քաղաքակրթական կողը»:

29 Թվերի և երկրաչափական ձևերի արտացոլումը մարդու ենթագիտակցության մեջ դարձել է արդի հոգեբանության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Տե՛ս **К. Г. Юнг**, Подход к бессознательному. Человек и символы, СПб, 1996, с.87-93.

30 Այս երեք չափումները համարվում էին անտիկ «աշխարհատեսական գեղագիտության» հիմքը՝ սկսած տիեզերագիտությունից մինչև բարոյագիտություն: **J. Burnet**, Early Greek Philosophy, London, 1920, p. 1921; **Ed. Zeller**, Outline of Greek Philosophy, London, 1954, p. 79

Ընդհանուր գծերով այսպիսին էր հայոց համակեցական սահմանի գործառական և բնագանցական կարգաբերման նոր հարացույցը: Արտաշես արքայի հաջորդ բարեփոխումները խնդիր ունեին բանական կարգաբերման ենթարկել կենտրոնի և ծայրամասի միջև ձևավորված տարածքը՝ իրավական, վարչական, ռազմական, կրոնաքարիզմատիկ, մշակութային և այլ չափորոշիչների կիրարկմամբ: Այլ խոսքով՝ հայկականությունը ձևակերպվում էր իբրև համակարգ իր հիմնարար չափումներով³¹:

բ. Համակեցական միջավայրի իրավական ձևակերպումը

Արտաշիսյան Մեծ Հայքի իրավական չափումի մասին խոսելիս հարկ ենք համարում մեկնարկել արքայական իշխանության հելլենիստական ըմբռնումից:

Վերև առիթ ունեցանք նկատելու, որ Ադեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով ձևավորված պետությունները (Եգիպտոս, Մակեդոնիա, Մելևկյան տերություն, Պերգամ, Հույն-բակտրիական պետություն և այլն) արդի պատմագիտության մեջ հաճախ բնութագրվում են իբրև ռազմաքաղաքական իրադրություններ: Նկատի է առնվում այն իրողությունը, որ բանակը (ռազմավարչական հրամայական) դրանց կյանքում շարունակում էր պահպանել իր վճռական դերակատարությունը: Եվ այն աստիճան, որ պաշտոնական տեքստերում ժողովուրդը ասելիս նկատի ունեին առաջին հերթին բանակը, իսկ աշխարհաժողով՝ դրա համահավաքը³²: Իսկ դրանք (հատկապես վաղ հելլենիստական դարաշրջանում) բաղկացած էին բացառապես մակեդոնացիներից և հույներից: Այլ խոսքով՝ ռազմաքաղաքական իրադրությունն ուներ աներկբա էթնիկ հակադրության երանգավորում:

Չափազանց կարևորվում էր հելլենիստական արքայի անձը: Նա համարվում էր տվյալ երկրի տարասեռ աշխարհագրական, էթնիկ, մշակութային, կրոնական, տնտեսական, քաղաքական միավորների համաբերման մարմնավորումն ու խորհրդանիշը՝ արժանի քարիզմատիկ-կրոնական վերապրումի և պաշտամունքի: Միաժամանակ նա համարվում էր երկրի միակ իրական սեփականատերը, քանզի վերջինս դիտվում էր իբրև նրա նիզակով նվաճյալ հողը: Այդու մասն՝ արքայական հողը: Եվ այդ ընկալումը ամրագրված էր իրավական տեքստերում և սովորություն³³:

Նման ընկալումը իրական էր նաև հայոց միջավայրում: Հայ պատմագիրները Մեծ Հայքը սովորաբար սահմանում են իբրև ձեռնական երկիր թագաւորի հայոց: Ի հաստատումն ասվածի՝ կարելի է մատնանշել Պատմահոր հանրահայտ բանաձևը. «[...] զի սահմանք քաջաց, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» [Խոր., I,8,4]: Դա բանալի է Արտաշես արքայի մյուս բարեփոխությունների ընկալման համար: Խոսքը նախ և առաջ երկրի վարչատարածքային բաժանման մասին է:

Նախքան Արտաշեսը, Մեծ Հայքի ներքին սահմանները կառուցված էին առավելաբար ըստ տանտերության (դինաստիզմ) սկզբունքի: Դրա հիմքը տոհմիկ ավագանու տիրությունն էին, որոնք հիշեցնում էին փոքրիկ թագավորություններ՝ իրենց տեղական սովորույթներով և իշխանական ուղղահայացով: Ոչ վաղ անցյալում հետազոտողներն այս կարգը անվերապահ նույնացնում էին ավատատի-

31 Տվյալ հիմնախնդրի մերօրյա ըմբռնումը մեկնարկում է Մ.Վեբերի «համակեցական կյանքի բանական կարգաբերման» հոլացքից: Տե՛ս մանրամասն **J.Habermas**, The Theory of Communicative Action v.1 (Reason and the Rationalization of Society), Boston, 1983, pp.143-156.

32 **F.Schachermeyr**, Alexander in Babylon und Reichsordnung nach seinem Tode, Wien, 1970, S.199-201; **A. Степанян**, Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм, историописание, Ер., 1991, с.98-100.

33 **E. Goodenough**, The Political Philosophy of Hellenistic Kingship, Yale Classical Studies, 1(1928), pp.63-65

րության հետ³⁴: Այժմ մոտեցումն այլ է: Արդի պատմական ընկերաբանության մեջ դինաստիզմը որակվում էր իբրև ավանդական համակեցական միջավայր (patrimony), որը հույժ կենսական է (հատկապես Արևելքում) և ի գործ է կյանքի կոչել տարակերպ հասարակական կարգեր՝ ինչպես ստրկատիրություն, այնպես էլ ավատատիրություն: Նաև՝ «ազատ արտադրողների համագործակցությամբ ձևավորված ընկերային համակեցություններ», որոնց լավագույն դրսևորումը հունական պոլիսներն էին և վաղ հռոմեական հանրապետությունը³⁵:

Գինաստիզմը նեկայացնում էր «անձնավորված արդարության» սկզբունքը: Ուստի՝ բնույթով միանգամայն հակոտնյա էր կետրոնաձիգ պետությանը: Արտաշես I-ին վերագրվող վարչատարածքային բարեփոխությունը նպատակ ուներ հնարավորինս հաղթահարել դա և հայոց համակեցական միջավայրում հաստատել «ընդհանրական արդարության» սկզբունքը³⁶: Այդ մասին պատմում է հռոմեացի հանրագիտակ Պլինիոս Ավագը. «Ստույգ հայտնի է, որ այն (Մեծ Հայքը) բաժանված է ստրատեգիաների, որոնք կոչվում են պրեֆեկտուրաներ: Գրանցից մի քանիսը պետք է, որ հնում առանձին թագավորություններ լինեին: Թվով հարյուր քսան են և ունեն բարբարոսական անուններ» [Plin., Nat. Hist., VI, 10, 2]:

Խոսքը հայոց նախարարությունների մասին է: Լատին ընթերցողը դյուրությամբ ընկալում էր այդ եզրի բովանդակությունը, քանզի praefectura-ն հատկանշում էր ենթակա տարածք, ուր Հռոմից ուղարկվում էր հատուկ լիազորություններով օժտված պաշտոնյա (praefectus)՝ ղեկավարելու տեղական կարևորության բոլոր գործերը³⁷:

Համապատասխանաբար՝ Մեծ Հայքի նախարարությունները գուտ տարածքային-վարչական միավորներ էին: Արքայի հրամանով դրանց գլուխ նշանակվում էին նախարարներ՝ օժտված վարչական, դատական, տնտեսական, ռազմական այլազան լիազորություններով: Նրանք ստեղծում էին տեղական վարչակազմը՝ բաղկացած տարբեր մակարդակի գործակալներից, դպիրներից, վերակացուներից, զինվորականներից: Իրենց ձեռնարկումների համար նրանք պատասխանատու էին միայն արքային և արքունիքին:

Վարչական ամենավորը միավորը համապարտ գյուղացիների համայնքն էր՝ գյուղը կամ շենը, գեղջավազի գլխավորությամբ: Վերջինս նույնպես պետական պաշտոնյա էր: Պետական իշխանության երաշխավորությամբ նա լուծում էր ներհամայնական բոլոր կարևոր հարցերը՝ հողօգտագործում, գյուղատնտեսական աշխատանքներ, հարկերի վճարում և այլն: Այս կապակցությամբ ցանկանում ենք հատկանշել մի կարևոր իրողություն. պետական պաշտոնեական ուղղահայացի ներթափանցումը գյուղական միջավայրում թուլացնում էր տոհմիկ-արյունակցական հարաբերությունների կարևորությունը³⁸:

Ի հետևանս Արտաշես արքայի վարչական բարենորոգման՝ Մեծ Հայքի տարածքը բանական կարգաբերման գործել խթան ստացավ: Նրա երկու հիմնարար բևեռների՝ կենտրոնի և ծայրամասի միջև առկա տարածքը դարձավ ծառայողական պաշտոնեության գործառույթի միջավայր: Հընթացս ժամանակի, վերջինս սկսեց կազմավորվել իբրև մի ուրույն հանրային խավ, որի ներունակությունը և խմբային բարօրությունը լիովին կախված էր արքայական իշխանությունից: Նրա

34 Սեկնարկելով իրենց ժամանակի ընկերաբանական ըմբռումներից՝ Ն.Ադոնցը և նրա հետևորդներն այս կարգը նույնացնում էին ավատատիրության հետ: Գտնում էին, որ Պլինիոսի հիշատակած ստրատեգիաները «տիրական իշխանություններ էին», իսկ նախարարները՝ «տիրական իշխաններ»: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, с. 434-435: Համաձայն **Ն.Ադոնցի**՝ այդ կարգը Հայաստանում ամփոփոխ գոյատևել է ընդհուպ մինչև մոնղոլների արշավանքները: Cf. **C.Toumanoff**, Studies in Christian Caucasian History, Washington, 1963, pp. 108-129.

35 **M. Вебер**, История хозяйства, Петроград, 1923, с. 43-45.

36 **R.Nozick**, Anarchy, State and Utopia, New York, 1974, pp. 6-39.

37 **A.N.Sherwin-White**, Praefectura, The Oxford Classical Dictionary, Oxford, 1995, p. 871.

38 **M. Вебер**, указ.соч., с. 45.

հիմնական հարստությունը (համեմայնդեպս՝ այս նախնական շրջանում) իր արհեստավարժությունն էր: Դրանով էլ նա էապես տարբերվում էր տոհմիկ ավագանուց, որն ուներ ընդարձակ ժառանգական տիրույթներ և ավելի ինքնաբավ էր:

Հատկանշելով հայոց ընտրախավի այս երկու խմբի տարբերությունները՝ չպետք է նաև աչքաթող անել այն, որ նրանց միջև, այնուամենայնիվ, առկա էին բավական սերտ (հաճախ արյունակցական) հարաբերություններ: Ենթադրելի է, որ շատ դեպքերում ծառայողական ավագանու շարքերը լրացնում էին հնագույն տոհմերի կրտսեր շառավիղները, որոնց առաջընթացի հնարավորությունները նախկինում հույժ աննշան էին: Այլոքեն՝ մեր խոսքը նրանց ընկերային դերակատարությունների տարբերության մասին է: Տարբերություն, որը հրճնաբան ժամանակի ստացավ նաև մշակութային երանգավորում: Տոհմիկ ավագանու արժեհամակարգի մեջ շարունակում էին գերակայել առասպելը, էպոսը և ծեսը, մինչդեռ ծառայողական ավագանին սկսեց հաղորդակցվել հելլենիստական գրականությանը, թատրոնին և իմաստասիրությանը³⁹:

Տոհմիկ ավագանու քաղաքական ազդեցության կարևորագույն հաստատությունը շարունակում էր մնալ աշխարհաժողովը, որը հրավիրվում էր տարիին (առնըվազն) մեկ անգամ՝ տարեսկզբին, Նավասարդ ամսին, Նպաստ լեռան լանջերին՝ Ծաղկոտն գավառում: Ոչ հեռու Բագարանն էր՝ համահայկական նշանավոր սրբատեղին: Տիրում էր համընդհանուր տոնի մթնոլորտը: Ներկա էին արքան, ավագանին, գորքը: Քննարկում էին երկրի առջև ծառայած կարևորագույն խնդիրները: Կարծիք կա, որ Նավասարդյան աշխարհաժողովին արքան ծիսականորեն «կորցնում և վերագտնում էր իր իշխանությունը»⁴⁰:

Հույժ նկատելի է հետևյալ փաստը. Արտաշես արքայի հուղարկավորությունը, որը կազմակերպված էր «քաղաքական կարգաբար», Պատմահայրը նկարագրում է ըստ աշխարհաժողովի ավանդույթի: Ի մի էին եկել ժամանակի հայ հասարակության տարբեր դասերը. «[...]որոշիք եւ բազմութիւն ազգականաց, եւ առ այստքիս պաշտումնէիցն գինուորութիւնը, եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն գարականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին [...] եւ զհետ՝ բազմութիւն ռամկին» [Խոր., II,60,13]:

Արքայական իշխանության բացարձակացման միտումին համընթաց՝ աշխարհաժողովի դերակատարությունը, պետք է կարծել, ավելի ու ավելի ծիսական էր դառնում: Արդեն Տիգրան II-ի դարաշրջանում (95-55 թթ.) սկսեց կարևորվել մայրաքաղաք Արտաշատի ժողովի (հրապարակ) դերակատարությունը, որտեղ տոն էին տալիս ծառայողական ավագանու ներկայացուցիչները: Այդուհանդերձ, արքան ամեննին էլ չէր շտապում հակասությունը լուծել հոգուտ Արտաշատի: Կենսունակ էին իշխանական հին ավանդույթները: Բացի այդ, երկու բևեռների միջև առկա լարվածությունը նրան տալիս էր խուսանավելու և ավելի ճկուն քաղաքականություն վարելու հնարավորություն⁴¹:

Իբրև ասվածի հաստատում՝ հետազոտողները ուշադրություն են հրավիրում հետևյալ իրողության վրա: Արտաշիսյան գահակալները կրում էին երկակի թագ՝ խույր և սպարոշ: Առաջինը խորհրդանշում էր նրանց կապն ավանդական աշխարհաժողովի հետ: Հայր՝ շեշտվում էր նրանց իշխանության օրինականությունը հայոց ներհանրութային միջավայրում ըստ սովորութային իրավունքի: Մինչդեռ երկրորդը խորհրդանշում էր նրանց իշխանության օրինականությունը ըստ

39 **А.А.Степанян**, указ. соч., с. 96-102.
40 **Ա.Ստեփանյան**, Արտաշիսյան դարաշրջանի Մեծ Հայքի ներքին կառույցի և արտաքին քաղաքականության մի քանի հիմնահարցերի մասին, Պատմություն և կրթություն, 3/4 (2006), էջ 6-8:
41 **Ա.Ստեփանյան**, Մեծ Հայքը անտիկ համաշխարհայնացման ծիրում (Քաղաքակրթական հետախայց), Պատմության հարցեր, 1(2009), էջ 16-17:
Սովորութային և դրական իրավունքի փոխհարաբերությունը անտիկ իրավագիտականության կարևորագույն բաղադրիչներից էր: Տես **S.Treggiari**, Leges Sine Moribus, The Ancient History Bulletin, 8(1994), pp..86-87.

դրական իրավունքի: Ապարոշ կրում էին հելլենիստական այն գահակալները, ովքեր հավակնում էին միջազգային հարաբերություններում ներկայանալ իբրև ինքնիշխան երկրի ինքնիշխան գահակալներ: Նրանք անգամ կրում էին հատուկ պատվանուն՝ *լիիրավ րեթ*⁴²: Հարկավ, Արտաշիսյան գահակալներին դյուրին չէր պահպանել հավասարակշռությունը *Նպասրի* և *Արորաշասրի* միջև, սակայն դրանից շատ դեպքերում կախված էին երկրի խաղաղությունը և բարօրությունը:

գ. Հողային «կադաստրը»

Մեծ Հայքի համակեցական տարածքի համակարգային վերակառուցման ճանապարհին մեծ կարևորություն ուներ Արտաշես I-ի հողային բարեփոխությունը: Մեկնակետն արքայի՝ վերը քննության առնված իրավական կարգավիճակն էր, համաձայն որի նա երկրի հողային ֆոնդի միակ իրական սեփականատերն էր: Մնացած բոլորը՝ ավագանի, զինվորականություն, քաղաքներ, տաճարներ, վերջին հաշվով տարաստիճան վարձակալներ էին: Դա է պատճառը, որ պարտականությունները չկատարելու պարագային արքան իրավասու էր նրանց տիրույթները «վերադարձնել յարքունիս»:

Հողային բարեփոխման վերաբերյալ մեր տեղեկություններն առավել քան հավաստի են: Հայտնաբերվել են Արտաշես I-ի շուրջ երկու տասնյակ արամեերեն արձանագրություններ, որոնք ունեն գրեթե նույնական բովանդակությունը. «Արտաշես արքա, բարի, որդի Չարեհի, Երվանդակյան»⁴³:

Խորենացին նույնպես անդրադարձել է այս խնդրին: «Ծիշտ է, նա չի հիշատակում արամեերեն արձանագրությունների մասին, սակայն ճշգրիտ տեղեկություն է տալիս բարեփոխության բովանդակության և իմաստի վերաբերյալ. «Յետ ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զահմանս գիւղից եւ ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ամելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լեռինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եվ նշան սահմանացն հաստատեաց...» [Խոր., II, 56,2]:

Խոսքը հողաբաժան սահմանաքարերի հաստատման մասին է: Մերօրյա եզրաբանությամբ՝ Մեծ Հայքում անցկացվում էր հողային կադաստր: Ընդ գերագույն երաշխավորությամբ արքայի կատարվում էր տարբեր կարգավիճակի հողերի հաշվառում և հստակ սահմանագծում: Պատմահայրը ճշգրիտ է նաև հողակտորների իրավական կարգավիճակի սահմանման մեջ՝ գյուղեր և ագարակներ: Հարկ է թերևս հավելել նաև՝ դաստակերտներ⁴⁴: Սակայն դրանից խնդրի էությունը չի փոխվում:

Խոսքը, մի կողմից, համայնական հողերի մասին է: Ազատ և համապարտ գյուղացիներից պահանջվում էր ըստ պատշաճի մշակել իրենց հողատարածքը (դաշտեր, այգիներ, արոտավայրեր) և դրա դիմաց արքային վճարել սահմանված հարկերը: Նրանք պարտավոր էին կատարել տեղական և համապետական կարևորության շինարարական աշխատանքներ (ճանապարհներ, ջրանցքներ, բերդամրոցներ): Ի հավելումն նաև՝ արքային տրամադրել աշխարհագորային ռազմական ուժ:

Մյուս կողմից, խոսքը մասնատիրական հողերի մասին է: Պաշտոնեության տարբեր մակարդակի ներկայացուցիչներն իրենց ծառայության դիմաց արքայից «յուտեստ» ստանում էին դաստակերտներ ու ագարակներ: Առաջինները, որոնք ավելի րնդարձակ, բարգավաճ և եկամտաբեր էին, պատկանում էին արքայական

42 A. Stepanian, Le traite de Randee et le couronnement de Tiridate l'Arsacide a Rome, ReArm, 9(1975), pp. 209-211; **Լ.Մինայան**, «Մեծ Հայք-Յոն» հարաբերությունների նոր ձևաչափը (Մի դիտողություն Արտաշատի դաշնագրի վերաբերյալ), Պատմության հարցեր, 1(2009), էջ 96-98

43 **Գ.Սարգսյան**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, 1966, էջ 184-191; **А. Г. Периханян**, Арамейская надпись из Зангезура, ИФЖ, 4 (1965), с. 104-111.

44 **Г.Х. Саркисян**, О двух значениях термина «дастакерт» в ранних армянских источниках, Ближний Восток, Византия, Иран, Москва, 1957, с. 97-99.

ընտանիքի անդամներին, խոշոր գործակալներին, տաճարներին և քաղաքներին: Երկրորդները, որոնք ավելի համեստ էին իրենց չափերով և պակաս եկամտաբեր, պատկանում էին միջին պաշտոնեության և զինվորականության (ուստանիկներ) դասին: Դաստակերտներին և ազարակներին միավորող մյուս կարևոր հատկանիշն այն էր, որ դրանք արդյունական (էֆեկտիվ) տնտեսություններ էին՝ հիմնված ստրկական աշխատանքի վրա: Դրանցում աշխատում էին ստրուկ-մշակները, որոնք մեծ մասամբ օտարերկրյա ծագում ունեին: Կային տեղական ծագումի ստրուկներ: Ի շարս դրանց, պետք է կարծել, քիչ թիվ չէին կազմում օրինախախտները՝ գողեր, կաշառառուներ, մարդադավեր, ավազակներ: Հարկավ, կային նաև պարտային ստրուկներ, որոնք չվճարված պարտքերի դիմաց իջեցվել էին այդ կարգավիճակի: Ստրուկներն աշխատում էին նաև քաղաքային արհեստանոցներում և գործատներում: Աշխատում էին նաև տաճարային տնտեսություններում⁴⁵:

Հաստատելով հողաբաժան սահմանաքարեր՝ արքան, հարկավ, առաջին հերթին հոգ էր տանում, որպեսզի ավագանու ներկայացուցիչները չընդարձակեն տիրություններն ի հաշիվ գյուղերի՝ օգտագործելով իրենց ուժն ու հեղինակությունը: Նա հստակ գիտակցում էր, որ իր իշխանության կարևորագույն ընկերային հենարանն ազատ համայնականներն էին: Համայնականներ, որոնք կազմում էին երկրի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը: Դարեր անց անդրադառնալով Արտաշես արքայի հողային բարեփոխության խնդրին՝ Դավիթ Անհաղթը դրա նպատակը բանաձևել է իբրև միտում՝ ապահովելու հավասարակշիռ վիճակ ավագանու հավանական հարստացման (յառաելլաստացութիւն) և համայնականների հավանական ընչազրկման (պակասաստացութիւն) միջև [Դավիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, 36]⁴⁶:

Ավաճը միանգամայն համահունչ է արդի ընկերաբանության հիմնարար դրույթներից մեկին. «Տնտեսվարությունը բառիս բուն իմաստով ենթադրում է բաշխիչ իշխանության խաղաղ օգտագործում՝ հանուն նյութական նպատակների իրագործման»⁴⁷:

դ. Ռ-ազմական բարեփոխությունը

Հայոց իշխանակենտրոն համակեցության մեջ բանակն ուներ հատուկ դերակատարություն՝ ապահովելով նրա ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անդորրը: Բանակի բարեփոխմանը Արտաշես արքան վերաբերվում էր ամենայն լրջությամբ:

Այս խնդրին անդրադառնալով՝ Պատմահայրը վկայում է. «Բաժանել Արտաշես եւ զիշխանութիւն զարուն ընդ չորս. զարեւելեանն թողու ի վերայ Արտաւագոյայ, եւ զարեւմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Մմբատայ հաւատայ եւ զիւսիսայինն ի Չարեհ» [Խոր.,II,53,12]: Կարելի է ենթադրել, որ խոսքը հետագայում լավ հայտնի բղեշխությունների (կողմնապահ կուսակալություններ) համակարգի մասին է: Բարեփոխումը խնդիր ուներ բարելավել հայոց բանակի մարտունակությունը՝ համակարգելով նրա կառույցն ու գործառույթը՝ ռազմավարություն, մարտավարություն, համալրում, մատակարարում և այլն: Հավելենք, որ բղեշխները, թեպետ մնացած նախարարներից առանձնանում էին իրենց բարձր դիրքով և ազդեցությամբ, համարվում էին պետական պաշտոնեության անկապտելի մասը: Հետևաբար՝ նշանակվում էին բացառապես ըստ արքայական կամքի և հրամա-

45 С.Т.Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, Известия АН Арм.ССР (Общественные науки), 11(1948), с.42-48.

46 Այս մասին մանրամասն տե՛ս Գ.Մ.Սարգսյան, Моисей Хоренский и Давид Непобедимый (Опыт установления источниковедческой связи), Кавказ и Византия, 1(1979), с.67-72.

47 М.Вебер, указ. соч., с. 5.

նի: Հետագա պատմությունը ցույց է տալիս, որ այս պաշտոնին հավակնելու համար արքայական ընտանիքին պատկանելն ամենևին էլ անշրջելի պայման չէր⁴⁸:

Արդեն Տիգրան II-ի (95-55 թթ.) և Արտավազ II-ի (55-34 թթ.) ժամանակաշրջանի վերաբերյալ ունենք բավական հստակ տեղեկություններ հայոց բանակի կազմի և քանակության մասին: Համաձայն դրանց՝ այն բաժանվում էր մշտական ու աշխարհագրային հատվածների: Մշտականը բաղկացած էր երեսուն հազար ընտիր հետևազորից և տասը հազար զրահավոր այրուձիուց: Վերջինս յուրահատուկ զորամիավոր էր: Բացի հայերից այդպիսին ունեին միայն պարթևները, մարերը և աղվանացիները. թե՛ մույզը, թե՛ հեծյալը կրում էին հաստ կաշվե զրահ: Նույն կերպ էր զինված նաև արքայի դրանիկ գունդը՝ բաղկացած վեց հազար հեծյալից [Strabo, XI, 14,5; Plut., Crass., 19, Ant., 38]⁴⁹:

Ռազմական անհրաժեշտության ժամանակ մշտական բանակին գումարվում էր աշխարհագրային հատվածը: Միասին դրանց թվաքանակը հասնում էր մոտավորապես հարյուր հազարի: Հայտնի էին բոլոր ստորաբաժանումները և զորահրամանատարները, ինչը բանակի կառավարումը դարձնում էր դյուրին և նպատակասլաց:

Արտաշես արքայի մյուս բարեփոխումները ցանկանում ենք համաբերել նրա մտահոգևոր նորամուծությունների իմաստավորմամբ:

Ե. Համալեզվության հաստատումը

Ավարտելով Արտաշես արքայի միավորիչ գործունեության մասին իր շարադրանքը՝ Ստրաբոնը հավելում է. «Հայրմ՝ բոլորը միալեզու դարձան» [Strabo, XI,14,5]: Վաղուց առիթ ենք ունեցել նկատելու, որ խոսքը, ամենայն հավանականությամբ, համապետական լեզվական ստանդարտի հաստատման մասին է: Ասվածը հաստատվում է ինչպես հելլենիստական դարաշրջանի պատմական փորձով, այնպես էլ Պատմահոր մի հույժ տարողունակ բանաձևով, որով Մեծ Հայքի սահմանները որոշարկվում են ըստ հայոց լեզվի տարածական ծավալման՝ «ի ծայրս հայերէն խասից», «գեգերք հայկական խասից», «աշխարհ ամենայն Հայոց լեզուին» [Խոր., II,3, 6; 8,5; Բուզ., IV,12,5]: Հավելենք, որ արդի ընկերաբանությունը, արժևորելով ներհանրության հաղորդակցական կապերի կարևորությունը, համակեցական կյանքը հաճախ ներկայացնում է իբրև «լեզվական խաղերի» միջավայր: Եվ այդ խաղերն առաջին հերթին միտված են կարգավորելու կենտրոնի և ծայրամասի ուղիղ (հրաման, հրահանգ) և հակադարձ (կատարում, հաշվետվություն) հարաբերությունները⁵⁰:

Ասվածը, հարկավ, հակասում է հայագիտության մեջ գերակայող մոտեցմանը, որն ազգային նշանագրերի ստեղծումը կապում է բացառապես սբ. Մաշտոցի գործունեության հետ: Ի պատասխան կարելի է կրկին ու կրկին մատնացուցել անտիկ և վաղ միջնադարյան հեղինակների տեղեկությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի վկայում են նախամաշտոցյան զրերի մասին: Կարելի է նաև դրանց հավելել արդի գրաբանության մոտեցումները: Առաջին, նախամաշտոցյան նշանագրերն, ամենայն հավանականությամբ, օգտագործվել են ոչմշակութային նկատառումներով, այլ լոկ՝ վարչատնտեսական (հույժ կարգաբերված) տեղեկությունի արձանագրման և հաղորդման համար: Երկրորդ, բացառված չէ, որ

48 Բ. Յարոսլինեան, Մեծ Հայքի բղջխութիւնների եւ բղջխութեան հաստատութեան շուրջ, Հանդես ամսօրեայ, 1/12 (2001), էջ 130-131:

49 N.C.Debevoise, A Political History of Parthia, New York, 1968, pp.80-81,123-124; С.Г.Тер-Израелян, Место армянской конницы в военном плане римского командования в связи с началом парфянского похода М.Антония, Научные труды (Министерство высшего образования Арм.ССР), 1(1966), с. 109-125.

50 J. Beniger, Control Revolution: Technological and Economic Origins of the Information Society, Cambridge (MA), 1986, pp. 65-71; J. R. Searle, The Construction of Social Reality, New York, 1995, pp.59-63.

այդ նպատակով (իբրև գաղափարագիր կամ հիերոգլիֆ) օգտագործվել է նույն արամեերենը: Հետերոէպիկական ընթերցմամբ այն հնչյունավորվել է հայերեն⁵¹: Հնարավոր են թերևս այլ բացատրություններ: Ինչևէ, այս հիմնախնդիրը կարիք ունի նոր քննարկումների:

գ. Իշխանության քարիզմատիկ հիմնավորումը

Արտաշես I-ի կողմից Մեծ Հայքի ընկերային տարածքի կարգաբերման մեկ այլ փորձառության մասին տեղեկանում ենք կրկին Պատմահոր պատումից: Խոսելով Արտաշատ մայրաքաղաքի կառուցման մասին՝ նա հավելում է. «... վասն որոյ անաշխատ եւ երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, եւ փոխէ ի նա Բագարանէ գլատկերն Արտեմիդեայ եւ զամենայն կուռս հայրենիս» [Խոր., II, 49,4]: Խոսքն, անտարակույս, կրոնաքարիզմատիկ կարգաբերման մասին է, որը սերտ աղերս ուներ արքայական իշխանության իրավական հիմնավորման և երկրում բարօրինության հաստատման հետ: Այն լայն տարածում ուներ հելլենիստական բովանդակ աշխարհում⁵²:

Հելլենիստական փորձը վկայում է, որ բացարձակ սեփականատիրական իրավունքով օժտված արքան ճանաչվում էր նաև երկրում գործառու իրավահարաբերությունների բնական մարմնացումը: Նրանից բխում էին բոլոր ածանցյալ իրավական ակտերը և գործողությունները: Ասվածը հինք է տալիս պնդելու, որ Արտաշես արքայի ջանքերով Մեծ Հայքում վերջնական անցում էր կատարվում տոհմական սովորության իրավունքից (նախնյաց բարքեր) դեպի դրական համապետական իրավունք (օրենք)⁵³: Դրական իրավունք, սակայն, հելլենիստական իմաստով, որի իրական աղբյուրը համարվում էր աստվածային հրամայականը: Արքան ընկալվում էր իբրև կապող օղակ աստվածայինի և ընկերային համակեցության միջև: Նման դերակատարության համար քուրմ-դայակի առաջնորդությամբ նա մանկուց անցնում էր գաղտնածես նվիրագործությունների (initiationes) միջով:

Հայոց արքունիքում քուրմ-դայակի պաշտոնը ժառանգաբար զբաղեցնում էին Բագրատունիները: Նրանց ղեկավարած նվիրագործական ծիսակարգը հույժ գաղտնի էր: Սակայն հնագույն էզոթերիկ փորձը հուշում է, որ դրա նախավերջին փուլը կոչվում էր հենց այն հանրության անունով, որին նվիրվում էր «մանուկը»՝ «մար», «պարսիկ», «ասորի» կամ «խարայեցի»⁵⁴: Դրանից վեր ծավալվում էր աստվածային ոլորտը, որին հասած արքան համարվում էր իր հանրության ոգեղեն օրենքը⁵⁵: Ամենայն հավանականությամբ, անտիկ հեղինակները մեկնարկում էին հենց այս իրողությունից, երբ Արտաշիսյան արքաներին երբեմն անվանում էին հայ՝ «Տիգրանես հայը», «Արտարածոս հայը» [Strabo, XIII, 1,55; Plut.,Crass., 22; Ant.,37,50]:

Կարծում ենք, հենց ըստ նվիրագործական ծեսի էլ շարակարգված է Պատմահոր պատումը մանուկ Արտաշեսի մասին: Բռնակալ Երվանդը կոտորել է Սանատրուկ արքայի բոլոր որդիներին: Ստնտուի և դայակ Սմբատ Բագրատունու ջանքերով փրկվել է միայն այս մանուկը⁵⁶: Խույս տալով բռնակալի հետապնդում-

51 **А.Я. Борисов**, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 2(1946), с.97-107; Ա.Սովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 93-94:
52 Խոսքն այսպես կոչված «քաղաքական հավատքի համակարգի» մասին է: Տե՛ս **M.Freeden**, Ideology, A very short Introduction, Oxford, 2003, p.39.
53 Համապետական իրավունքի և իրավական աստիճանակարգի մասին տե՛ս **А.А. Степанян**, указ.соч., с. 89-90; **А.Е.Аstin**, «Regimen morum», Journal of Roman Studies, 78(1988), pp.16-21.
54 **E.Bock**, The Three Years.The Life of Christ between Baptism and Ascendation, Edinburgh, 2005, pp.192-193
55 **E. Goodenough**, op.cit., pp.71-73.
56 «Մանուկ» և «ծեր» եզրերը հայոց միջավայրում ունեին շեշտված ընկերային բովանդակություն: Տե՛ս

ներից՝ վերջինս. «[...]ընդ երեսու լերանց եւ դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբ՝ սնուցանէ ի հովուականս եւ յանդերձորս»։ Դրանից հետո նրանք ապաստանում են «ընդ գաւրագոյիսն Պարսից»։ Ի վերջոյ պարսից Գարեհ Վերջինի սատարմամբ սպանում են բռնակալին։ Եվ քուրմ-դայակը Արտաշեսին թագադրում է. «[...] եւ գտեալ գթագն Սանատրկոյ արքայի՝ դնէ ի գլուխն Արտաշեսի եւ թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկիրս Հայոց» [Խոր., II, 37, 14, 15; 47, 2]։ Այլորեն՝ արքայի նվիրագործութիւնն անցնում է երեք հիմնական շրջափուլով՝ «հովվութիւն», «գինվորութիւն», «արքայութիւն»։

Դրանք հանգույն էին հասարակութեան կառույցի վերաբերյալ հնագույն պատկերացումներին՝ արտադրողներ, գինվորներ, կառավարիչներ։ Հին հնդեվրոպացիներն այդ դասերը խորհրդանշում էին երեք գույներով՝ սև (կամ կապույտ), կարմիր և սպիտակ (կամ դեղին)։ Արքայի խնդիրն էր կամրջել համակեցական տիեզերքի այդ երեք մակարդակները։ Եվ ապա՝ լծորդել դրանք աստվածային ոլորտին⁵⁷։ Առկա էր խորագույն համոզմունք, որ միայն այդ պարագային էր հնարավոր համակեցական կյանքի տարբեր բաղադրիչների ներդաշնակութիւնը։

Աստվածային ոլորտին էին հարաբերվում նաև արքաների հաճախ կրկնվող այլ պատվանունները։ Դրանք համասեռ էին։ Այսինքն՝ դրանց իմաստային դաշտերը փոխարացնում էին միմյանց։ Բարեգործ՝ այն առումով, որ աստվածային կամքին ականջալուր արքան բարիք էր բերում իր հպատակներին։ Իսկ բարիքի ընդհանրական իմաստը բնական և համակեցական (մշտակա հնարավոր) քառսի կամային-գործողութեան կանխառնում էր և կարգ-ներդաշնակութեան հաստատումը։ Կարծում ենք, հենց այս իմաստով պետք է մեկնաբանել արքայի արամներեն արձանագրութեան մեջ հիշատակվող բարի պատվանունը։ Դրանից էլ տրամաբանորեն բխում էր մյուս պատվանունը՝ փրկիչ։ Թեպետ Արտաշես I-ի վերաբերմամբ վերջինս վկայված չէ, սակայն Տիգրան II-ի և Արտավազդ II-ի կապակցությամբ առկա են հավաստի (դրամագիտական) փաստեր։ Ասվածն արդարացի է նաև մյուս պատվանունն՝ մասին՝ բարեպաշտ, որն ընդգծում էր արքայի առանձնահատուկ բարիզմատիկ-բարոյական առնչությունն աստվածային ոլորտին⁵⁸։

Ավելին, Տիգրան II-ը և Արտավազդ II-ը իրենց հռչակեցին նախ՝ հայտնյալ (աստված), իսկ ապա՝ պարզապես աստված։ Հանրույթը սկսեց նրանց պատվել աստվածավայել գոհերով ու պատիվներով։ Այս լույսի ներքո դիտարկելով Պատմահոր վերոբերյալ վկայությունը՝ միանգամայն հստակ է. Արտաշես I-ն այդքան հեռու չի գնացել, բավարարվել է իր արքայատոհմի (նախնյաց) պաշտամունքը սերմանելով։ Եվ դա, կրկնենք, մի արդյունական խթան էր Մեծ Հայքի տարասեռ ընկերային զանգվածը ի մի բերելու և կազմավորելու իբրև ինքնութեան կանխ-նակա միավոր՝ Հայ, որն ինչպես նշվեց վերը, համարվում էր արբազնային մտա-հոգևոր սնեռումի առարկա։

Է. Համակեցական համաժամանակությունը

Պատմահայրը ճարտասանական եռանդով Արտաշես I-ին վերագրում է ևս մի բարենորոգություն՝ համահայկական համաժամանակության սահմանումը։ Յավոք, այն միշտ չի արժանանում պատշաճ ուշադրության։ Մինչդեռ նրա բովանդակությունը հույժ հարիր է արքայի գործունեության համակարգային ընկալմանը։ Համաձայն վերջինիս՝ հենց Արտաշես արքան է հայոց միջավայր ներմուծել տո-

M. Bais, La vecchiaia nella letteratura armena antica, Բազմավեպ, 1/4 (2003), pp. 381-405.

57 G. Dumezil, *Heur et malheur du guerrier*, Paris, 1969, pp. 53-58. Նման պատկերացումներն իրենց դրսևորումն ունեն «Սասնա ծռեր» էպիքական ապոմբ։ Տե՛ս մանրամասն A. A. Степанян, указ. соч., с. 36-39.

58 Այս պատվանունների մասին մանրամասն տե՛ս E. Goodenough, *op. cit.*, pp. 71-93; K. Bringmann, *The King as Benefactor. Some Remarks on the Kingship in the Age of Hellenism, in – Ideologies, Self-Definition in the Hellenistic World*, (ed. A. Ballock), Berkeley, 1993, pp. 246-253.

մարը՝ «գիտություն» նվիրված «գլխաբաց ասեմ ու զամսաց եւ գտարեաց բոլորմանց» [Խոր., II, 59, 3]: Ամենայն հավանականությամբ, խոսքը Մելեկյան տարեցույցի մասին է, որի սկզբնատարին համարվում էր Ք.ա. 312 թվականը: Այն լայն տարածում ուներ հելլենիստական Մերձավոր Արևելքում:

Մերօրյա համակարգագիտությունը փաստում է, որ յուրաքանչյուր համակարգի անխափան վիճակը շատ առումներով պայմանավորված է իր կառուցակազմիկ բաղադրիչների համաչափ և համաժամանակյա գործառությամբ⁵⁹: Բացառություն չեն ընկերային-համակեցական համակարգերը: Դրանցում կայուն վիճակն ապահովվում է «ծրագրված բանական ճիգերի և գործողությունների միջոցով»՝ տարաբնույթ հասարակական աշխատանքներ, տոներ, ծեսեր, հանդիսություններ, պաշտամունք և այլն: Հայոց արքայի նորամուծությունն, անտարակույս, հենց նման նպատակ էր հետապնդում՝ համահարաբերել Մեծ Հայքի տարբեր ծագերում կատարվող «հասարակական գործողությունները»՝ ըստ ժամանակի միևնույն ընդհանրական չափումի: Դրա տեսանելի արդյունքը պետք է դառնար «համընդհանուր մասնակցումի զգացողությունն ու գիտակցությունը»՝ հայոց համակեցական ինքնության նոր մակարդակը:

Ոչ պակաս կարևոր էր նաև մյուս նպատակը՝ համահարաբերակցել Մեծ Հայքի ընկերային ժամանակը շրջակա աշխարհի ժամանակին: Հայրժմ՝ հայոց ներհանրությանին հոմեոստասիսը ստանում էր արտահանրությանին իմաստ ու բովանդակություն:

ը. Արտաշես I-ի նորամուծությունների ընդհանրական պատկերը

Այսպիսով, *առաջին*. արքայի բարենորոգչական գործունեությունը նպատակ էր հետապնդում համակարգային վերակառուցման ենթարկել հայոց համակեցությունը: *Երկրորդ*. այն միտված չի եղել ապահովել համակեցական մեկ բաղադրիչի բացարձակ գերակայությունը մյուսների նկատմամբ, այլ կարևորել է դրանց բոլորի համաչափ հավասարակշռությունը: Հավասարակշռություն, որը հելլենիստական միտքը լծորդում էր գոյութենական *միջինի* գաղափարին: Իսկ դրա ընկերային ածանցյալը *հանուր բարօրությունն* էր⁶⁰:

Կրկները մեկ անգամ էլ. ընդ իրավաբաղաբական, տնտեսական, մշակութային, կրոնաբարիզմատիկ երաշխավորությամբ Արտաշես արքայի՝ Մեծ Հայքում հավասարակշռություն հաստատվեց ընկերային համակեցության տարասեռ միավորների միջև՝ տոհմիկ ավագանի, ծառայողական ավագանի, քրմություն, քաղաքային համայնք, գյուղական համայնք: Առկա էր նաև զգալի քանակությամբ ստրկություն: Այդուամենայնիվ, կարծում ենք, իրական չէ այդ հասարակությունը բնորոշել իբրև ստրկատիրական՝ ինչպես վարվում են արդի հետազոտողներից շատերը: Չպետք է մոռանալ, որ հասարակության նյութական և հոգևոր արժեքների մեծագույն մասը ստեղծվում էր ի հաշիվ ազատ աշխատանքի:

Կարծում ենք, իրականությանն ավելի հարիր է Մեծ Հայքում ձևավորված ընկերային միջավայրը բանաձևել իբրև ավանդական կորպորատիվ համակեցություն՝ դրա մասնակիցների ընկերային դերակատարության խստիվ (օրինական) կարգաբերմամբ: Ասվածը համահունչ է իդեալական պետության պլատոնական բանաձևին, որը հույժ արդիական էր հելլենիստական քաղաքագիտության ծիրում. «Օրենքը միտված է ապահովելու ոչ թե մարդկանց ինչ-որ մի դասի բարօրությունը, այլ՝ ամբողջ պետության» [Plato, Rep., VII, 519c]: Համոզված ենք, հենց դա 59 Գամաժամանակությունը համարվում է յուրաքանչյուր համակարգի հիմնարար չափորոշիչներից մեկը: Դա վերջինիս հաղորդում է «կարգ, ռիթմ և թիվ» հանդիսանալով նրա նպատակի և գործառույթի միասնության ցուցիչ: L. Bertalanffy, op. cit., 14-16; J. R. Searle, op.cit., pp. 46-47.

60 Գանուր բարօրությունը Արիստոտելի ընկերաբանության մեջ դիտարկվում է իբրև «համակեցական ենտելեխիայի (կատարման)» ցուցիչը: Տե՛ս P.Merlan, Greek Philosophy from Plato to Plotinus, in - History of Later Greek and Early Medieval Philosophy (ed. A.H.Armstrong), Cambridge, 2007, pp.50-51.

էլ հայոց հելլենիզմի կարևորագույն առանձնահատկությունն էր: Նման հարցադրումը, հարկավ, պահանջում է հանգամանալից հետազոտություն, ինչը, սակայն, դուրս է ներկա ուսումնասիրության սահմաններից:

թ. Համակեցական տեսականը

Արտաշես արքայի բարենորոգիչ գործունեության վերաբերյալ պատումը Պատմահայրն ավարտում է հայոց համակեցական միջավայրի իդեալական պատկերով: Համաձայն նրա՝ վերջինիս ձևավորմանը մեծապես նպաստել են ժամանակի «նորագույն տեխնոլոգիաների» ներմուծումը՝ «արուեստը եւ գիտութիւնը», որոնցից հայոց միջավայրը նախկինում անմասն էր մնացել: Դրանց կիրարկմամբ. «[...]ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային եւ ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս» [Խոր., II, 56, 5] Ասույթի հիպերտեքստային ընդլայնումը հուշում է, որ Պատմահոր մտապատկերում «ածուն» է՝ «մասն արտոյ կամ պարտիզի, ուր լինին անք կամ բոյսք ընտանի բանջարոց»⁶¹: **Այլ խոսքով՝ Մեծ Հայքն Արտաշես արքայի անդուլ ջանքերով վերածվել էր համընդգրկուն մշակութային միջավայրի:**

Այդու՝ արքայի կերպարը միանգամայն համադրելի է Երկրագործի կերպարին: Իսկ դա իր հերթին տալիս է հիպերտեքստային ընդլայնման նոր հնարավորություն: Բանն այն է, որ շնորհիվ Փիլոն Աղեքսանդրացու, այդ հոլացքը հայոց հունաբան միջավայրում հնչում էր յուրօրինակ բովանդակությամբ և իմաստով: Եվ Պատմահայր Խորենացին, կասկածից վեր է, դրա կրողներից էր:

Փիլոնը տվյալ կերպարին անդրադարձել է իր մի բանի քննախոսություններում: Ի շարս դրանց առանձնանում է հատկապես մեկը՝ «Երկրագործության մասին»: Ընդամին, իմաստասերը մեկնարկում է երկու եզրից՝ *երկրագործություն և հողի մշակություն*: Համաձայն նրա՝ դրանք հակոտնյա են: Հողի մշակն իր գործը կարող է կատարել առանց խոր գիտելիքների, զի նպատակն իր վարձն է: Համակեցական կյանքում նրան համապատասխանում է թույլ կառավարիչը, կամ էլ, ընդհակառակը՝ բռնապետը [Philo, De agr., 1,8]⁶²:

Ինչ վերաբերում է Երկրագործին, ապա նա ամեն ինչ անում է, որպեսզի իր հողակտորը ծաղկի ու պտղաբերի. «Նա այլ բան չի ցանկանում, քան տեսնել իր անեցրած բարիքը» [Philo, De agr., 1,5]: Նա հանգույն է ճշմարիտ կառավարչին, քանզի. «Բնությամբ նրան նախանշված է լինել առաջնորդ այն բոլոր բույսերի և մահկանացու արարածների նկատմամբ, որոնք իրեն առընթեր են» [Philo, De agr., 1,8]: Նրա հիմնական հատկանիշն արդարադատությունն է. «Ձի շնորհիվ իր երկրագործական արվեստի հատվում են և հեռացվում կրքի ու չարության բոլոր ծառերը (որոնք աճել են մինչև բարձրակետ՝ տալով մահաբեր պտուղներ), որպեսզի ստորակա որևէ բան չվերապրի, որպեսզի չարիքի նոր ճյուղեր չծլարձակեն» [Philo, De agr., 1,9]: Ավելին, Երկրագործը պարտավորություն ունի սնուցել ճշմարիտ այրերին. «չափավորության, քաջության, իմաստության, արդարության և բոլոր այլ առաքինությունների պտուղներով» [Philo, De agr., 1,18]: Խորենացին հավելում է, որ դա արվում էր «վասն բարեկարգութեան եւ աննախանձ կենաց» [Խոր., II, 8,41]: Հավանաբար, երկուսի մեկնակետն էլ Ստոիկյան ընկերաբանությունն է, որը շարունակելով Արիստոտելին, մարդկային համակեցության նպատակը համարում էր *երջանկությունը և բարեկարգությունը*⁶³:

Ըննարկվող ասույթի հիպերտեքստային մյուս ընդլայնումը իրական է հենց Պատմահոր գրույթի շրջանակներում: Հիմքը՝ վերջինիս երկխոսային առնչու-

61 Սոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, Եր., 1979, էջ 21:

62 D.T.Runia, God and Man in Philo of Alexandria, Journal of Theological Studies, 39(1988), pp.58-59.

63 J.Rist, Stoic Philosophy, Oxford, 1969, p.142.

թյունն է հայոց ինքնության խորենացիական հանրահայտ բանաձևի հետ. «Ձի թէպես եւ ենք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զարութեամբ տկար, եւ ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի [...]»[Խոր., I,3,4]:

Ակնհայտ է, բանաձևը բաղկացած է երկու տարասեռ հատվածից: Առաջինը կառուցված է ինքնության ապաստան (ապոֆատիկ), իսկ երկրորդը՝ ենթասական հաստատման (կատաֆատիկ) սկզբունքով: Եվ ասույթի կառույցում դրանք փոխընդհանուր են հավասարակշռում են միմյանց: Արտաձական սկզբունքը ենթադրում է ինքնաձխտողության ալգորիթմ, որի մեկնակետը «փոքր ածուն» է՝ Մեծ Հայքում աստիճանաբար տիրական դարձած մշակութային հետադիմությունը: Դրանից պատճառական լծորդմամբ (եւ...եւ...եւ) բխում են բացասական ալգորիթմի մյուս բաղադրիչները՝ սահմանափակ թվաքանակ, տկար ուժ, օտարի տիրապետություն: Ինչ վերաբերում է ենթասական սկզբունքին, ապա դա նախատեսում է դրական ալգորիթմ, որի մեկնակետ-պատճառը ենթադրում է «ածուի» ինչ-որ մակարդակ, որն իսպառ չի վերացվել: Հնում դա պատճառ է եղել բազում մեծագործությունների: Եվ կարելի է հուսալ, ի գորու է նոր սկզբի մեկնակետ դառնալ:

Միայն չնչին հավանականությամբ կարող ենք պնդել, որ սա 5-րդ դարի մեծ վերափոխիչների գնահատականն է հայոց պետականության ոչ վաղ անցյալի փլուզմանը: Անկել էր Արշակունյաց արքայատունը (428 թ.) և դրա հետ միասին՝ իշխանակենտրոն քաղաքակրթական համալիրը: Համալիր ծրագիր էր մշակվում քաղաքակրթական հոմեոստասիս նոր հարացույցի մշակման համար: Եվ անցյալի խոշոր անհատականությունների կերպարներն անհրաժեշտ էին իբրև ուղեցույց⁶⁴: Այդ առումով առավել հրապուրիչ էր Արտաշես I-ը՝ գահակալ, որը Մեծ Հայքում հաստատել էր իշխանակենտրոն հոմեոստասիսը՝ լայնորեն օգտագործելով դարաշրջանի առաջավոր մշակութային և տեխնոլոգիական հարացույցերը:

Summary

THE PROBLEM OF CIVILIZATION HOMEOSTASIS IN GREAT ARMENIA

Part 1. The Intracommunal Homeostasis. Artaxias I

Albert A. Stepanyan

The paper looks at the civilizational interpretation of one of the crucial epoques of ancient Armenia. It begins with a brief survey of the term “civilization” in modern humanities. Among the main features of this approach the homeostasis has been taken into consideration.

Two varieties of homeostasis are basic for my discussion - intra/ and extra-social. The first of them made the meaning of reforms of Artaxias I – the founder of the Artaxiad dynasty in Armenia. They embraced a large scope of social stratum including cadastre and administrative system, trade and religious beliefs, culture and army etc. All of them looked at the end of rationalization of social stratum of Great Armenia by overpowering traditional (tribal and dynastic) structures. King Artaxias was successful in his innovation program. Owing to them Armenia could keep step with the developed states of the time.

64 **A. Stepanian**, Alessandro nella Storia degli Armeni Movses Xorenac'i. Fonti e semantica dell'immagine, La diffusione dell'eredita classica nell'eta tardoantica e medievale, Roma, 2(1998), pp.293-295.